13884

891.99
U-75

Ադիտ
1912

ՄԻՏՍ-ՁԻ

ԶԱՆԹԵԿԼԵՐԻ ՀԱՄԱՐ

2003

891.99
Մ-75

Н АРМ. 2-434а
391.99
Մ-75
769

ՄԻՏՍ-ՉԻ

ՉԱՆԹԵԿԼԵՈՐԻ ՀԱՄԱՐ

ИЗЪ-ЗА ШАНТЕКЛЕРА
вод. въ 1 дѣйств. соч. Митсчи.

ՎՕՐՎԻԼ. ՄԷԿ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

ԱՆՁԻՆՔ

Մովսէս—վաճառական—55 տարեկան։
Նատալիա—կինը—30 տար.
Մագթաղ—Նատալիայի մայրը—60 տար.
Արշալոյս—սրանց դ՞րծակատարը—35 տ.
Սոֆի—աղախին—25 տար.
Սերոբ—ծառայ—20 տար.

ТИФЛИСЪ
Электропечатня А. Кереселидзе, Габаевск. пер. № 1.
1912

44525-ստ.

ՀԱՅԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՐԱՀ. ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱՆ
ՀԱՅԿ-ՌՈՍ. ՍՍՀ

29521-63

ՇԱՆԹԵԿԼԵՕՐԻ ՀԱՄԱՐ

Վոդ. 1 գործ.

Բեմը՝ միջակ կահաւորւած դահլիճ։ Կէս օր է։

I

ՄՈՎՍԷՍ և ՆԱՏԱԼԻԱ

ՆԱՏԱԼԻԱ.—Որ տրաքւէս, պիտի շանթեկլեօրի դէյրա հագնեմ։

ՄՈՎՍԷՍ.—Դու էլ որ տրաքւէս, պիտի պատառ-պատառ անեմ։

ՆԱՏ.—Չեմ հասկանում, թէ դու ինչ ես ուզում ինձանից, թատրոն չես թողնում, որ գնամ, սարբանիա չես թողնում, որ լոսո խաղամ, Ֆալավինսկի չես թողնում, որ ման դամ, մեծ հլեապա չես թողնում, որ ծածկեմ, հիմի էլ շանտեկլեօրի դէյրա չես թողնում, կրակ է...

ՄՈՎՍ.—Էդպէս է, տրաքւիր, չեմ թողնում. իմ կամքն է, ուզում ես սատկիր։

ՆԱՏ.—(ժողովրդին) տեսնում ք... (նրան) Դու սատկես, հա... դու սատկես, որ քեզնից ազատւեմ, քոփակ...

ՄՈՎՍ.—Քոփակ... այ թէ քեզ քոփակ, (ապ-

տակում է), ով է քոփակը, շան պէս կը սատակեցնեմ...

ՆԱՏ.—Վա՛յ, վա՛յ... օգնեցէք, սպանեց... խեղդում է...

II

ՆՈՅՆՔ, ՍԵՐՈԲ և ՍՕՖԻ

ՍԵՐՈԲ.—(Մովսէսին), աղա ջան, ինչ էք անում ամօթ է ինչ, լայեղութիւն է... ապա ինչ կասեն խալխը...

ՄՈՎՍ (Զայրացած) քու ինչ գործն է, հեռացիր շուտով աչքիցս, իմ ապրանքս չէ՞, ինչքան ուզեմ, կը զնկեմ, դու ով ես, տէրտէր ես, ինչ ես։ (Սերոբը դուրս է գնում)։

ՍՕՖԻ.—(Դաղտնի Նատալիային). Տիկին, Արշալոյսը ասաց, որ ժամը մէկին կըգայ, էս քոփակին հեռացրէք, եթէ ոչ իրար կըհանդիպեն, արդէն ժամանակն է։

ՆԱՏ.—(Մովսէսից դաղտնի. ուրախ). Ճի՞շտ։

ՍՕՖԻ.—Այո, ինչքան կարող էք շուտ։

ՆԱՏ.—(Լացը շարունակելով. Մովսէսին). Լաւ, չեմ հագնի շանթեկլեօր, միայն մեծ շլեապա կըծածկեմ...

ՄՈՎՍ.—Մի մեծ քար ծածկիր։ (Գնում է)։

ՍՕՖԻ.—Ներեցէք ինձ, տիկին, դուք շատ թոյլ էք. մի՞թէ չէք կարող այդ քոփակին շան պէս սատակեցնել։

ՆԱՏ.—Ես էլ եմ ուզում, որ սատակեցնեմ, բայց ի՞նչ կերպ։

ՍՕՖԻ.—Շատ միամիտն էք։ Վերցրէք մի քիչ մկի թոյն, ածէք նրա կերակրի մէջ, կուտէ և... տունը կըձգէ։

ՆԱՏ.—Լաւ ես ասում, բայց յետոյ բժիշկները փորը կըկտրեն և կընկատեն, որ թունաւորուած է։

ՍՕՖԻ.—Այդ դէպքում դուք էլ ասացէք, որ դուրսն է տրաքուել ճաշը, մի քիչ էլ աչքերիդ սրխոտոր քսեցէք, կըհաւատան։ Դուք էլ կաղատուէք ու Արշալոյսիդ հետ...

ՆԱՏ.—Կըլինի՞ (մտածում է). ա՛խր...

ՍՕՖԻ.—Էլ ի՞նչ «ախր»։ Ես ի՞նչպէս եմ արել. չորս տարուայ պսակուած էի, որ ամուսնուս ուղարկեցի իր պապերի մօտ։

ՆԱՏ.—Պատճառն ի՞նչ էր։

ՍՕՖԻ.—Պատճառն այն էր, որ ինձ լաւ չէր պահում, տարին մի անգամ հաղիւ էր մի շոր առնում, այն էլ ի՞նչ—քիշմիր, հողեմ նրա գլուխը՝ ինչպէս որ հողեցի։ Բացի դրանից քիթը (իր քիթը ծռելով) ահա այսպէս, բերանը (բերանը ծռելով) ահա այսպէս, դունչը...

ՆԱՏ.—Ուրեմն, ասում ես, որ մկի թոյն ուտեցնեմ...

ՍՕՖԻ.—Ի հարկէ. մարդ այսքան հարստութիւն ունենայ և ուզածի պէս չապրի՞...

ՆԱՏ.—Շատ լաւ ես ասում։ Ուղարկիր Սե-

բոբիկն թող բերի. բայց չասես, թէ ինչու համար է հարկաւոր։

ՍՕՖԻ—Խօմ չեմ գժուել։

ՆԱՏ.—Ասա, որ մկներ պէտք է սատկացնենք։

ՍՕՖԻ.—Ի հարկէ։ Դէ շտապենք (երկուսը միասին դուրս են գնում)։

III.

ՍԵՐՈԲ և ՍՕՖԻ

ՍՕՖԻ.—(Սերոբի հետ ներս է մտնում). Անպիտանները շատ են երես առել. այս գիշեր եկել են և աղջիկ-պարոնի մահճակալի վրայ են բարձրացել. հինգ կոպէկի կըբերես, կէսը հացի վրայ կըքսես և կըդնես մահճակալի տակ, իսկ միւս կէսը կը տաս ինձ, որ վաղւայ համար պահեմ։

ՍԵՐՈԲ.—Շատ լաւ. ինչպէս ասեմ, ռսեվար չեմ իմանում։

ՍՕՖԻ.—Ասա՝ մկներ սատկեցնելու դեղ, на пять копѣекъ. այդքան բան էլ չես իմանում։

ՍԵՐՈԲ.—Ո՞նց չեմ իմանում, իմանում եմ. համա, Սօֆի, չը նեղանաս, քեզ հետ մի սեկրետ ունեմ. ախր քանի քեզ տեսնում եմ, բերնիս ջուրը գնում է...

ՍՕՖԻ.—Վոյ, թաղեմ քեզ, կաս, գնա կորի աչքիցս, դու էիր մնացել... քեզ ինչ հրամայեցի՝ էն կատարիր։ (Շտապով դուրս է գնում)։

ՍԵՐ.—(մենակ)։ Լաւն է, համա շատ չարաճակոտն է։ Մկներ սատկացնելու դեղ են ուզում. էն կի չէ խաղէյինիս են սատկեցնելու, դռան ծակից ականջ էի դնում. մի մկան դեղ շանց տամ, որ ձերը մոռանաք։ Կըգնամ մի քիչ ալիւր կըբերեմ, խմոր կըշինեմ, կասեմ մկի դեղ է. տեսնենք վերջը ինչ կըլինի. (գնում է)։

IV.

ԱՐՇԱԼՈՅՍ, ՆԱՏԱԼԻԱ, յետոյ ՍԵՐՈԲ

ԱՐՇ.—Հախն է այդ քոփակին. դեռ երեկ ասում էր, որ ինձ պէտք է դուրս անի. հիմա տեսնենք ով ում դուրս կանի...

ՆԱՏ.—Հողեմ նրա քաչալ գլուխը։

ԱՐՇ.—Այդ ամենը լաւ, Նատալիա ջան. ասենք խաղէյինն էլ գնաց... յետոյ մենք ի՞նչ ենք անելու։

ՆԱՏ.—Ինչպէ՞ս թէ ինչ ենք անելու. ինչ օր որ թաղենք, այդ օրը խանութը փակ կըլինի, երկրորդ օրը դու կըշարունակես առուտուրը. չէ՞ որ այնուհետև նրա բոլոր կարողութիւնը իմս է. թէև մինչև երեխայի մեծանալը իրաւունք չունենք անշարժ կայքերը ծախելու, բայց առուտուրը շարունակելու իրաւունք ունենք։

ԱՐՇ.—Իսկ մենք... չպէտք է պսակուենք։

ՆԱՏ.—(հաստատ). ի հարկէ, ի հարկէ, բայց

ամենաքիչը գոնէ վեց կամ ութ ամսից յետոյ, եթէ ոչ ամօթ է։

ԱՐՇ.—Հա, այդ կարելի է։

ՆԱՏ.—Ինչ եմ ասում. երեկ որ տեսայ այն սուկնօն, երբ դու շարունակես առուտուրը, չծախես. մէկ էլ մի թօփ սպիտակ ատլաս պահիր պսակի շորի համար։

ԱՐՇ.—Անպայման. 4 արշին էլ սև մահուդ իմ սերդուկի համար։

ՆԱՏ.—Հա, հա, անպատճառ, որ տեսնողը չասէ, թէ հասարակ մարդու հետ եմ պսակւում։

ԱՐՇ.—Ուրեմն ամեն բան վերջացած է։ Օ՜հ, որքան երջանիկ կը լինենք... Հիմա, հիմա էլ չես թողնի, որ համբուրեմ։ (ուզում է փաթաթել)։

ՆԱՏ.—(արդելելով). Սպասիր. քելեխից յետոյ կը գաս ինձ մօտ, իբրև կարգադրութիւններ լսելու և...

ԱՐՇ.—(ուժով փաթաթւում է). Այն ժամանակ էլ, հիմա էլ. (համբուրում է. այդ ժամանակ Սերորը գլուխը դուրս է բերում դռնից եւ ծիծաղում. նրանք շարունակ համբուրւում են),

ՍԵՐ.—Օխա՜յ... (հեռանում է, Նատալիան ու Արշալոյսը իսկոյն բաժանւում են միմիանցից. Արշալոյսը դուրս է փախչում. մկի դեղը բերել եմ։

ՆԱՏ.—Շատ լաւ ես արել. այն անպիտանն էլ եկել է, թէ վզիս չափը վերցնէ, որ իմ անուանակոչութեան օրը շղթայ պէտք է ընծայէ։

ՍԵՐ.—Հա՜... մեղայ Աստծու, ես էլ կարծեցի,

թէ համբուրում է. աղջիկ պարոն, ե՞րբ է քո անուանակոչութիւնը։

ՆԱՏ.—(քաղցր). չը գիտե՞ս, կիրակի օրը։

ՍԵՐ.—Աղջիկ պարոն, ներողութիւն, ես էլ եմ ուզում քեզ շղթայ բերել. չափը ես էլ վերցնե՞մ

ՆԱՏ.—Քո բերած շղթան չեմ ուզում, դու ո՞վ ես... քո չափը ճանաչի՞... լսիր, ես քեզ 5 մանէթ կը ընծայեմ, թէ խազէյինիդ չես ասի տեսածդ։

ՍԵՐ.—Չէ, չեմ ասի թէ վզիդ չափը վերցրեց... ինչ իմ բանն է։ (դրպանից մի թել է հանում). այ, աղջիկ պարոն, սրանով կը վերցնեմ չափը։

ՆԱՏ. — Ցիմարութիւններդ թող, ասում եմ, չես ամաչում։

ՍԵՐ.—Ամաչում եմ. համա...

ՆԱՏ.—Գնա կորիր. ես կը պատրաստեմ դեղը, անիծածները զահլէս տարան։

ՍԵՐ. — (Դուրս դնալով)։ Պատրաստիր, շատ խեր կը տանես։

V.

ՆԱՏԱԼԻԱ միայնակ, յետոյ ՍՕՖԻ

ՆԱՏ.—Շանթեկլեսօրի շոր չես թողնում... տեսնենք թէ ինչպէս չես թողնի, դեռ մի ճաշդ անուշ արա. (կանչում է) Սօֆի, Սօֆի։

ՍՕՖԻ.—(ներս է մտնում)։ Հրամայեցէք, տիկին։

ՆԱՏ.—Այ, Սոֆի, տար այս տեղը և ամբողջովին գցիր Մովսէսի ափսէի մէջ։ Տես որ բան չընկատէ, եթէ ոչ երկուսով էլ կորած ենք։

ՍՈՖԻ.—Անհոգ եղէք, այս իմ արհեստն է... մի այնպիսի քուփթա-բոզբաշ ուտեցնեմ քո քաչալին, որ դեռ իր կեանքում կերած չըլինի։

ՆԱՏ.—Դու ինձ ասա, ո՞րքան ժամանակից յետոյ կաղդէ դեղը։

ՍՈՖԻ.—Բաւական է, որ ուտէ, տասը րոպէից յետոյ...

ՆԱՏ.—Հա։ Այսօր ի՞նչ օր է։

ՍՈՖԻ.—Ուրբաթ։

ՆԱՏ.—(մատների վրայ համրելով)։ Ուրբաթ, շաբաթ, կիրակի։ Հէնց կիրակի օրը կարող ենք թաղել։ Պէտք է իմաց տալ մօրս, որ գայ ես մենակ չեմ կարող գլուխ դուրս տանել, նա հին կին է, երկու մարդ է թաղել, լացի-մացի ձևերը լաւ է իմանում։ Հէնց այժմ կարող ես իմաց տալ որպէսզի մի ժամից այստեղ լինի։

ՍՈՖԻ—Շատ լաւ. (պատուհանից դուրս է նայում)։ Գալիս է։

ՆԱՏ.—Հա... դէ շտապիր խոհանոց, քուփթա-բոզբաշը պատրաստիր։ Սիրտս դըմբըդում է. (մի-ասին դուրս են դնում)։

VI.

ՄՈՎՍԷՍ, յետոյ ՍԵՐՈԲ, ՍՈՖԻ, ՆԱՏԱԼԻԱ

ՄՈՎ.—(ժամացոյցին նայելով ներս է մտնում). Սէկ

և կէսն է։ Ինչքան է երկարել օրը, որ նոյնիսկ չեմ յիշում, թէ երբ է լուսացել։ այնքան էլ քաղցածացել եմ, որ երևի աղիքներս կըկարծեն թէ իրենց տէրը մեռել է. (կանչում է). Սերոբ, Սերոբ. ո՞ր ջհաննամն են գնացել, չեն երևում. Սերոբ։

ՍԵՐՈԲ.—(ներս վազելով)։ Համմէ աղա, էստեղ եմ։

ՄՈՎ.—Ի՞նչ է, մի սահաթ էլ ձեզ պէտք է սպասեմ, որ մի բան բերէք ուտելու։

ՍԵՐ.—Էս սահաթիս կըբերեն, աղա ջան։

ՄՈՎ.—Սերոբ մօտ արի, բան եմ ասում։

ՍԵՐ.—(մօտենալով). Հրամայեցէք։

ՄՈՎ.—Եթէ ճիշտն ասես, քեզ մի լաւ ընծայ կը տամ։ Այսօր Արշալոյսը եկաւ այստեղ։ Դրուստն ասա, եթէ ոչ դուրս կանեմ, ես գիտեմ ճիշտը, բայց ուզում եմ քեզանից իմանալ։

ՍԵՐ.—Աղա ջան, ո՞նց ասեմ, դրուստ է, եկաւ, համա էլի գնաց, մենակ աղջիկպարոնի վզի չափը վերցրեց...

ՄՈՎ.—Ինչպէս թէ վզի չափը...

ՍԵՐ.—Այնպէս, վզի չափը...

ՄՈՎ.—Ինչո՞ւ վերցրեց։

ՍԵՐ—Աիր չգիտեմ... կիրակի օրը աղջիկպարոնի մենենիկն է, շղթայ է փէշքէշ անելու։

ՄՈՎ.—Ես չեմ հասկանում, թէ ինչ ես խօսում. ինչպէս վերցրեց. (այդ միջոցին Սոֆին կերակուր է բերում եւ դնում սեղանի վրայ. Սերոբը փաթաթւում է Սոֆիին ու համբուրում)։ Այ այսպէս, աղա ջան, չափը վերցրեց ու տարաւ։

ՍՕՖԻ.—(վախեցած). Ինչ ես անում, լիմար. չՔս ամաչում. (գաղտնի, նրան). սպասիր, երեկոյեան կիմանաս...

ՄՈՎ.—(Սոֆիին). շուտ, աղջիկպարոնիդ կանչիր, շո՛ւտ։

ՍՕՖԻ.—Դեռ ճաշը անուշ արէք, պարոն, կը սառչի, աղջիկ-պարոնը այս բոպէիս կըգայ. գլուխը քիչ ցաւում է։

ՄՈՎ.—Ես նրան գլխի ցաւ ցոյց կըտամ... (Սոֆին գնում է)։

ԱԵՐ.—Աղա ջան, էլ բան չունէՔ ասելու։

ՄՈՎ.—Դու գնայ դուքան, ես էս սահաթիս գալիս եմ։

ՍԵՐ.—(Գնալով, առանձին)։ Ափսոս որ թամաշան չը պէտք է տեսնեմ։

ՄՈՎ.—(Ուտելով) Ես նրան վզի չափ շանց կը տամ. (այդ մրջոցին Նատալիան եւ Սոֆին դուրը կիսատ բաց են անում ու լսում)։ Դեռ ամենից առաջ սրան կըվռնդեմ տանից, էս տեսակ կին ինձ հարկաւոր չէ, թող գնայ իր Արշալոյսի մօտ։

ՆԱՏ.—(դռնից, առանձին). Քու քաչալ գլուխը գիտենայ. դեռ ճաշդ անուշ արա։ (Մովսէսը գինի է խմում). օխա՛յ, այդ քո վերջին բաժակն է։

ՄՈՎ.—Օհ, շատ եմ չարացած. ո՞ւմ համար եմ աշխատում. հէյ գիտի հա, ինչ դայրաթ էլ ա՞նում, որ փող հաւաքեմ, տունս լաւ պահեմ, երեխիս ուսում տամ... էն կի՛ չէ, սիրեկաններ է պահում։ Էհ, պիտի գնամ էսօրւայ առուտուրը Օրթաճալում ուտեմ, ինչ եմ անում, սրանից յետոյ ո՞ւմ համար դայրաթ անեմ։

ՆԱՏ.—(դռնից, առանձին). Օրթաճալա գնա, բարով գնաս, դեռ մի սատկի, ցինկի կուբօն կոխեմ քեզ։

ՄՈՎ.—(Վեր է կենում, ձեռքով փորը շփում եւ գնում է իր ննջարանը։ Նատալիան ու Սոֆին կամաց ներս են մտնում).

ՆԱՏ.—(ննջարանի բանալիի ծակից նայելով). պառկեց, հէնց էդպէս էլ կըմնայ Սոֆի, շուտով սեղանը հաւաքիր, թէ չէ կընկատուի, որ ճաշը տանն է կերել. (Սոֆին ամանները հաւաքում ու տանում է դուրս ու իսկոյն ներս մտնում). վաղը այդ անպիտան Սերոբին էլ դուրս կանեմ։ Տես ինչ է անում, ես լաւ չեմ տեսնում։

ՍՕՖԻ.—(Նայում է բանալիի ծակից). Աղջիկ պարոն, ձգել է... ոտները փռել է..

ՆԱՏ.—Ի՞նչ ես ասում... մտիր ներս մի...

ՍՕՖ.—Վո՛յ, աղջիկ-պարոն, ես մեռելից վախենում եմ. (շարունակ նայում է բանալիի ծակից). չի՛ շարժւում։

ՆԱՏ.—(բարձր ձայնով լալիս է). բոյիդ, բոսաթիդ...

ՍՕՖԻ.—Փախիր, գալիս է։

ՆԱՏ.—(երկուսն էլ զարմացած դուրս են փախչում)։

ՄՈՎ.—(դուրս է գալիս ննջարանից). Էս ո՞վ էր գոռում, ինչ է պատահել, Տէր Աստուած, չեմ հասկանում, թէ ինչ օյիններ են խաղում գլխիս. հան-

գիստ քնելու էլ չեն թողնում. (չարացած դուրս է գնում։ Նատալիան ու Սոֆին ներս են վազում ու պատուհանից դուրս նայում)։

ՆԱՏ.—Զէ, Սոֆի, սխալւած ես, սա սատկող պտուղ չէ։

ՍՈՖԻ.—Իր քէֆն է, ապասիր, թող մի քիչ ման գայ, կերածը փորը իջնի, տես թէ ինչ օրի կը կանգնի։

ՆԱՏ.—Հիմա որ ճամբին մեռնի, ինչ պիտի անենք։

ՍՈՖԻ.—Ինչ պէտք է անենք. մեռելին կըբերենք տուն ու գլխին լաց կըլինենք։

ՆԱՏ.—(դուրս նայելով). Ծուռեց միւս փողոցը... դու այստեղ կաց, ես գնամ երեխին ծիծ տամ, պատուհանից շուտ-շուտ դուրս նայիր։

ՍՈՖԻ.—(մենակ. պատուհանից շարունակ դուրս նայելով). Եթէ իսկապէս կատարի տիկինս իր խոստումը, շատ լաւ կըլինի... հինգ հարիւր բուբլին քիչ փող չէ. մի լաւ տղայ կըճարեմ և...

ԴՐՍԻՑ ՁԱՅՆ—Գօրոդովոյ, գօրոդովոյ...

ՍՈՖԻ.—Ինչ է պատահել։

ԴՐՍԻՑ—Կամուրջի վրայ մի մարդ ուշաթափ ընկաւ, գորոդովոյ։

ՍՈՖԻ—(վազելով դէպի դուռը). Տիկին, տիկին։

ՆԱՏ.—(ներս վազելով). Ինչ է, մեռաւ...

ՍՈՖԻ.—Մեռաւ, պրծաւ... տես ինչպէս է վազում ժողովուրդը։

ԴՐՍԻՑ ՁԱՅՆԵՐ—Սկօրի պոմոշչ կանչեցէք...

ՆԱՏ.—Վոյ քոռանամ... (բարձր ձայնով կեղծ լալիս է). բոյով, բուսաթով Մովսէս Ջան, աշխարքի աչք, Մովսէս Ջան, ինչ պատահեց, որ էդպէս ձեռաց չորացար Մովսէս Ջան, արի մօտս սփաթդ տեսնեմ, Մովսէս Ջան...

ՍՈՖԻ.—(լալով). Խազէյին Ջան...

VII.

ՆՈՅՆԲ, ՄՈՎՍԷՍ, ՍԵՐՈԲ, յետոյ ՄԱԳԹԱՂ

ՄՈՎ.—(Սերոբի հետ ներս է մտնում մի փայտ ձեռին). Մէկի դեղ են ուտեցրել... այ ձեզ մէկի դեղ. (փայտով ծեծում է Նատալիային ու Սոֆիին)։

ՄԱԳԹԱՂ.—(դրսից, բարձր). Աչքդ դուրս գայ, Մագթաղ... (ներս է մտնում եւ ապշած դիտում է շուրջը. Մովսէսը յարձակւում է նրա վրայ եւ հարւածում)։

ՄՈՎ.—Էս բոլորը շանթեկլեօրի համար, էլէ...

ՎԱՐԱԳՈՅՐ



Нарм
Н 2-1314а

54.

2013

13884